1. «Մանուկյան Ծին» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության վերաքննիչ բողոքը բավարարել մասնակի՝ ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի թիվ ԵԴ2/7968/02/24 քաղաքացիական գործով 03.12.2024թ. կայացրած վճիռը բեկանել և փոփոխել հետևյալ կերպ.

«1.1 «Մանուկյան Ծին» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հայցն ընդդեմ ՀՀ Կոտայքի մարզի Աբովյանի համայնքապետարանի, վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջ չներկայացնող երրորդ անձ «Ակբա բանկ» բաց բաժնետիրական ընկերության՝ «Մանուկյան Ծին» ՍՊԸ-ին գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին թիվ 3818 որոշումն անվավեր ճանաչելու և պատասխանողի գործողությունը ոչ իրավաչափ ճանաչելու պահանջի մասին, բավարարել:

1.2 Անվավեր ճանաչել «Մանուկյան Ծին» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին Աբովյանի համայնքապետարանի 05.09.2024թ. թիվ 3818 որոշումը,

1.3 Ոչ իրավաչափ ճանաչել Աբովյանի համայնքապետարանի գործողությունը՝ ԱԲՀ-ԲՄԱԾՁԲ-24/87 ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում որպես հայտի ապահովում ներկայացված «Ակբա Բանկ» ԲԲԸ-ի կողմից 05.08.2024 թվականին տրամադրված թիվ 21 0140 689988/21 բանկային երաշխիքի գումարը՝ 5.115.000 ՀՀ դրամ վճարելու պահանջ:

2. Դատական ծախսերի բաշխման հարցը համարել լուծված:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից մեկ ամիս հետո և նույն ժամկետում կարող է բողոքարկվել Վճռաբեկ դատարան:

Նախագահող դատավոր՝ **Լիլիթ Սարգսյան**

Դատավորներ՝ **Հարություն Ենոքյան**

Կարեն Համբարձումյան

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am